ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 72-136-3

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2001 թ. հունիսի 7-ի նիստի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մասնակցում էին՝

Մ. Թոփուզյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար- նախարար

Կ. Կիրակոսյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ

Լ. Մկրտչյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Կ. Հայրապետյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների

		խորհրդի անդամ ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ
Ռ. Խուրշուդյան	-	«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կառուցվածքի, հաստիքային ցուցակի, աշխատավարձի դրույքաչափերի հաստատման և աշխատանքների կազմակերպման ընթացքի մասին

(Ռ. Խուրշուդյան, Կ. Հայրապետյան, Լ. Մկրտչյան, Կ. Կիրակոսյան, Մ. Թոփուզյան, Տ. Սարգսյան)

1. Հաստատել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կառուցվածքը, հաստիքային ցուցակը, աշխատավարձերի դրույքաչափերը (կցվում են)։
2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կառուցվածքում, հաստիքային ցուցակում՝

   ա) «գիտական բաժին»ը վերանվանել «գիտական դեպարտամենտ»-ի

   բ) «ուսումնամեթոդական բաժինը»՝ «ուսումնամեթոդական դեպարտամենտ»-ի

   գ) «խորհրդատուն»՝ «խորհրդական»-ի։
3. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Խուրշուդյանին՝

ա) հոգաբարձուների խորհրդի առաջիկա նիստի քննարկմանը ներկայացնել հիմնադրամի կարիքների համար մարդատար ավտոմեքենա ձեռք բերելու վերաբերյալ առաջարկ,

բ) կազմակերպել Վայոց Ձորում «Նորավանք» գիտակրթական կենտրոնի շինարարական համալիրի համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով պատվիրելու աշխատանքները, իրականացնել «Նորավանք» գիտակրթական կենտրոնի երևանյան գրասենյակի վերանորոգումը (գրասենյակին տարածք հատկացնելուց հետո),

գ) 20 օրվա ընթացքում մշակել և ներկայացնել 2001թ. աշխատանքային ծրագիր

4. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ պրն Արա Ավետիսյանին՝

առաջարկել աշխատանքներ տանել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի երևանյան գրասենյակին տարածք հատկացնելու ուղղությամբ։

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի անդամ
նախագահող Տ. Սարգսյան